ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

Ք. Երևան «28» օգոստոս 2023թ № 1601-Լ

ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻՑ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ԱԿՏԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սերմերի և տնկանյութի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով.

հրամայում եմ.

1. Սահմանել՝

1) մշակաբույսերի սերմերի և տնկանյութի խմբաքանակից նմուշառման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) մշակաբույսերի սերմերի և տնկանյութի խմբաքանակից նմուշառման ակտի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հոկտեմբերի 5-ից:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

Հավելված 1.
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2023 թվականի օգոստոսի 28-ի
N 1601-Լ հրամանի

ԿԱՐԳ

1. ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻՑ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետություն սերմերի և տնկանյութի ներմուծման, Հայաստանի Հանրապետությունից սերմերի և տնկանյութի արտահանման, հավաստագրման ենթակա սերմերի և տնկանյութի խմբաքանակից նմուշառման ընթացակարգը:

2. Սերմերի և տնկանյութի նմուշառումը կատարվում է սերմերի և տնկանյութերի խմբաքանակներից, որոնք նույնականացված են սերմերի և տնկանյութերի խմբաքանակների թվերով:

2. ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) **սերմերի խմբաքանակ՝** ծագմամբ և որակով միատարր, մեկ սորտի (տեսակի) և դասի սերմերի որոշակի քանակություն, որոնք ունեն որակը հավաստող միևնույն փաստաթուղթ.

2) **տնկանյութի խմբաքանակ՝** ծագմամբ, տարիքով և որակով միատարր, մեկ սորտի (տեսակի) և կարգի տնկանյութի որոշակի քանակություն, որոնք ունեն որակը հավաստող միևնույն փաստաթուղթ.

3) **նմուշառում՝** սերմերի կամ տնկանյութի հավաստագրման փորձաքննությունների անցկացման նպատակով սերմերի կամ տնկանյութի խմբաքանակից սերմերի կամ տնկանյութի նմուշներ վերցնելու գործողությունների համալիր.

4) **հայտատու՝** սերմ կամ տնկանյութ արտադրող, ներկրող, արտահանող իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

5) **կետային նմուշ՝** սերմերի խմբաքանակից մեկ գործողության ընթացքում վերցված սերմերի ոչ մեծ քանակություն, որը վերցված է միացյալ նմուշի ձևավորման համար.

6) **միացյալ նմուշ՝** սերմերի խմբաքանակից վերցված, կետային նմուշների միացմամբ ստացված սերմերի քանակություն, որից ստացվում է լաբորատոր փորձաքննության համար ներկայացվելիք միջին նմուշ (նմուշներ).

7) **միջին նմուշ՝** միացյալ նմուշի մի մասը, որն առանձնացվում է լաբորատոր փորձաքննության ներկայացնելու համար.

8) **սերմերի կամ տնկանյութի խմբաքանակի հղման (վկայակոչման) թիվ՝** սերմերի կամ տնկանյութի խմբաքանակների նույնականացման համար կազմվող և կիրառվող՝ թվանշաններից ու տառանշաններից բաղկացած ծածկագիր, որը ներառում է բերքահավաքի տարվա վերջին թիվը, սերմի դասի կամ տնկանյութի կարգի ծածկագիրը, սերմեր և տնկանյութ արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանում հաշվառման համարը և բերքահավաքի տարվա արտադրության խմբաքանակի հաջորդական համարը.

9) **լիազոր մարմին՝** Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության ենթակայությամբ գործող «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

3. ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

4. Նմուշառման ժամանակ, սերմի և տնկանյութի խմբաքանակում առկա բոլոր սերմերը և տնկանյութերը պետք է լինեն նույն վիճակում՝ սերմերը բեռնամաններով կամ կոյտերով, ախտահանված կամ չախտահանված, իսկ տնկանյութերը՝ խրձերով: Եթե սերմերն ախտահանված են տարբեր թունաքիմիկատներով, ապա կազմվում է առանձին խմբաքանակ՝ միևնույն թունաքիմիկատով ախտահանված սերմերից: Բեռնամանները կամ կոյտերը և խրձերը, որտեղից վերցվում է սերմի և տնկանյութի նմուշը, պետք է լինեն նույն չափի և նույնատիպ տարայավորված, պարունակեն սերմի և տնկանյութի միևնույն քանակությունը:

5. Հայտատուն սերմի և տնկանյութի խմբաքանակը կազմելուց հետո լիազոր մարմին է ներկայացնում սերմերի ու տնկանյութի նմուշառման և փորձաքննության մասին հայտ՝ պարտադիր հավաստագրման ենթակա բույսերի տեսակների ցանկը, հավաստագրման ժամկետը կարգը և այդ նպատակով օգտագործվող ձևաթղթերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

6. Նմուշառուն հայտն ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է նմուշառում:

7. Սերմերի և տնկանյութի խմբաքանակից նմուշառման համար տարբեր մասերից պատահական վերցվում են մոտավորապես նույն քանակությամբ կետային նմուշներ:

8. Կետային նմուշները միացվում են (խառնվում են), և ստացում է միացյալ նմուշ, որը բաժանվում է միջին նմուշի (նմուշներ): Սերմերի խմբաքանակի զանգվածը և միջին նմուշի նվազագույն զանգվածը ներկայացված է N 1 աղյուսակում:

Աղյուսակ 1

Սերմերի խմբաքանակի զանգվածը և միջին նմուշի նվազագույն զանգվածը

Սերմի տեսակը	Խմբաքանակի զանգվածը (ստուգվող միավորի), ոչ ավել (g)	Փորձաքննության համար ներկայացվող միջին նմուշի նվազագույն զանգվածը (գրամ)
Աշորա	600	1000
Առվույտ	100	250
Արևածաղիկ	250	1000
Արտիշոկ	50	100
Այծամորուք	100	250
Բակլա	-	1000
Բամիա	100	250
Բողկ	100	100
Գազար	100	50
Գարի	600	1000
Գետնանուշ	250	1000
Դդում սովորական և շշաձև	250	500
Դդում խոշորապտուղ	250	1000
Դդում մուսկատային	250	500
Դդմիկ	100	250
Եգիպտացորեն	400	1000
Երեքնուկ մարգագետնային (կարմիր), բոսորագույն	100	250
Երեքնուկ սողացող և հիբրիդային (սպիտակ և վարդագույն)	100	100
Եղջերաառվույտ	50	100
Եղեսպակ	50	100
Թրթնջուկ	100	50
Ժիտնյակ	100	50
Իշառվույտ	100	250
Լոլիկ (պոմիդոր)	100	50
Լոբի	250	1000
Լյուպին բազմատերևային	100	500
Լյուպին միամյա	250	1000
Լյուֆա	50	250
Խավարծիլ	50	100
Ծաղկակաղամբ		25
Ծնեբեկ	50	100
Ծխախոտ	20	10

Կաղամբ (բոլոր տեսակի)	100	50
Կանեփ	100	500
Կանեփ թելատու	100	500
Կանճրակ (ասպուր)	100	500
Կորեկ	200	500
Կորնգան	200	500
Հազար	100	50
Համեմ	100	100
Հնդկաձավար	200	500
Հլածուկ	100	100
Ձմերուկ	200	500
Ճակնդեղ սեղանի և կերային	200	500
Մաղադանոս	100	50
Մանանեա սպիտակ, Սարեպյան, սև	100	100
Մանանեա աղցանի (տերևային)	20	25
Մախորկա	10	50
Մաշ	100	500
Նեխուր	100	2505
Շաղգամ	-	20
Շեկլիկ սունկ	100	100
Շուղախոտ	100	50
Ոլոռ (բոլոր տեսակի)	600	1000
Պատիսոն	100	250
Պղպեղ	100	50
Ռայգրաս	100	50
Ռեհան բանջարնոցային	20	25
Սամիթ	100	50
Սեխ	100	100
Սիսեռ	250	1000
Սոխ (բոլոր տեսակի)	100	50
Սոյա	600	1000
Սորգո	100	250
Սմբուկ	100	50
Սպանախ	50	100
Վարունգ	100	100
Վարսակ	600	1000
Վիկ	200	500
Ցորենաշորա (տրիտիկալե)	600	1000
Ցորեն	600	1000
Քունջութ	50	100
Ֆենխել	50	100
Ուրց	20	50
Ոսպ	200	500

9. Սերմերի խոնավության որոշման փորձաքննության համար սերմերի կետային նմուշները վերցվում են այնպես, որ նվազագույնի հասցվի մթնոլորտի ազդեցությունը: Այդ կերպ ստացված միացյալ նմուշն ամբողջությամբ ներկայացվում է փորձաքննության՝ հերմետիկ փակվող տարայով: Այն պահվում է այլ փորձաքննությունների համար նախատեսված սերմերից առանձին:

10. 10 կիլոգրամը գերազանցող բեռնամաններից նմուշառումը կատարվում է որպես նմուշառման հիմնական միավոր՝ ընդունելով 100 կիլոգրամ զանգվածը, իսկ փոքր բեռնամանները համակցվում են այնպես, որ կազմեն 100 կիլոգրամը չգերազանցող նմուշառման միավորներ: Նմուշառման նպատակով յուրաքանչյուր միավոր դիտարկվում է որպես մեկ պայմանական բեռնաման: Նմուշառման նպատակով առանձնացվող բեռնամանների քանակը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Նմուշառման նպատակով առանձնացվող բեռնամանների քանակը (բացառությամբ կողրերով եգիպտացորենի և մինչև 10 գրամ կշռող փաթեթներով փաթեթավորված բանջարային մշակաբույսերի սերմերի)

Սերմերի խմբաքանակում բեռնամանների քանակը (պայմանական միավոր), հատ	Նմուշառման նպատակով առանձանցված բեռնամանների քանակը
մինչև 5	բոլոր բեռնամանները
6-30	յուրաքանչյուր երրորդը, սակայն ոչ պակաս 5 հատից
31-400	յուրաքանչյուր հինգերորդը, սակայն ոչ պակաս 10 հատից
401 և ավելի	յուրաքանչյուր յոթերորդը, սակայն ոչ պակաս 80 հատից

11. Սերմերը փոքր ծրարներով (ոչ ավելի, քան 100 գրամ) ներմուծելու կամ արտահանելու դեպքում յուրաքանչյուր ծրար դիտարկվում է որպես կետային նմուշ, և միջին նմուշ ստանալու համար պատահական ընտրությամբ վերցվում են աղյուսակ 3-ում ներկայացված միջին նմուշի քանակությունն ապահովող թվով ծրարներ:

Աղյուսակ 3.

Բեռնամանների կամ ներառյալ մինչև 10 կիլոգրամ զանգվածով բանջարային մշակաբույսերի սերմերի փաթեթների նմուշառման համար առանձնացված քանակները

Սերմերի զանգվածը բեռնամանում (փաթեթում), կգ	Խմբաքանակում բեռնամանների (փաթեթների) քանակը (պայմանական միավոր), հատ, ոչ ավելի	Նմուշառման համար առանձնացված բեռնամանների (փաթեթների) քանակը, %, ոչ պակաս 10
մինչև 0.1-ը ներառյալ	1000	2,0
0.2-ից » 0.5 »	1000	1.5
» 0.6 » 1.0 »	1000	1.0
» 1.1 » 3.0 »	500	1.0
» 3.1 » 10.0 »	200	10,0

12. 15-100 կիլոգրամանոց բեռնամանների դեպքում նմուշառման ենթակա բեռնամաններն ընտրվում են պատահականորեն, իսկ կետային նմուշները վերցվում են բեռնամանների վերին, միջին ու ստորին մասերից:

13. 100 կիլոգրամից ավելի տարողությամբ բեռնամաններից և սերմերի կույտից նմուշառման ժամանակ կետային նմուշները վերցվում են պատահական ընտրված տարբեր հորիզոնական և ուղղահայաց դիրքերից, որը ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4.

Բեռնամաններից և սերմերի կույտից նմուշառման ժամանակ կետային նմուշների քանակը

Սերմերի խմբաքանակի քաշը	**Կետային նմուշների քանակը**
մինչև 500 կգ	առնվազն 5 կետային նմուշ
501-3000 կգ	մեկ կետային նմուշ՝ յուրաքանչյուր 300 կգ-ի համար, բայց ոչ պակաս, քան 5 նմուշ
3001-20000 կգ	մեկ կետային նմուշ՝ յուրաքանչյուր 500 կգ-ի համար, բայց ոչ պակաս, քան 10 նմուշ
20001 կգ և ավելի	մեկ կետային նմուշ՝ յուրաքանչյուր 700 կգ-ի համար, բայց ոչ պակաս, քան 40 նմուշ

14. Նմուշառումից անմիջապես հետո սերմերի բեռնամանները կնքվում են նմուշառուի կողմից կամ նրա հսկողությամբ: Սերմերի խմբաքանակը կնքվում է այնպես, որ անհնար լինի սերմերի բեռնամանը բացել առանց կնիքը խախտելու (վնասելու):

15. Նմուշառման գործիքները պետք է սերմերի խմբաքանակի բոլոր մասերից նմուշ վերցնելու հնարավորություն ընձեռեն: Կետային նմուշ վերցնելու համար օգտագործվում են տարբեր տեսակի զննաձողեր, շերեփներ և այլ գործիքներ:

16. Միացյալ նմուշը կարող է օգտագործվել որպես միջին նմուշ, եթե միացյալ նմուշի քաշը փոքր չէ տվյալ տեսակի սերմերի միջին նմուշի համար սահմանված նվազագույն քաշից (N 1 աղյուսակ): Եթե միացյալ նմուշի քաշը գերազանցում է միջին նմուշի համար սահմանված քաշը, ապա միջին նմուշ ստանալու համար օգտագործվում են համապատասխան գործիքներ:

17. Պտղահատապտղատու մշակաբույսերի տնկանյութի, պատվաստակալի, կտրոնների և վեգետատիվ ճանապարհով բազմացված պատվաստակալների որակի համապատասխանությունը սահմանված նորմերին ստուգելու համար խմբաքանակի տարբեր հատվածներից առանձնացվում են նմուշներ՝ աղյուսակ 5-ում ներկայացված քանակներին համապատասխան:

Աղյուսակ 5.

Որակի գնահատման նպատակով նմուշառվող տնկանյութի նմուշառվող քանակը

Տնկանյութի տեսակը	Խմբաքանակում բույսերի թիվը, հատ												
	Մինչև 400	Մինչև 500	500-1000	Մինչև 1000	Մինչև 3000	3000-5000	5000-ից ավելի	5000-10000	10000-ից ավելի	3000-10000	10000-50000	50000-100000	100000-ից ավելի
Պտղատու մշակաբույսերի	-*	-	-	-	200	-	-	-	-	300	500	800	1000

պատվաստակալներ (հնդավորներ, կորիզավորներ)													
Պտղատու մշակաբույսերի միամյա և երկամյա տնկիներ սաղարթով	-*	-	-	50	-	100	-	150	200	-	-	-	-
Պտղատու մշակաբույսերի միամյա տնկիներ առանց սաղարթի	-*	-	-	60	-	100	-	200	300	-	-	-	-
Պտղատու մշակաբույսերի փակ արմատային համակարգով տնկիներ	-*	-	-	10	-	20	-	40	100	-	-	-	-
Պտղահատապտղատու մշակաբույսերի և վեգետատիվ բազմացվող պատվաստակալների փայտացած կտրոններ	-*	-	-	100	-	200	-	400	500	-	-	-	-
Պտղահատապտղատու մշակաբույսերի և վեգետատիվ բազմացվող պատվաստակալների կանաչ կտրոններ (ընտրանքային եղանակով ընտրում են բեռնամանից)	-*	-	-	25	-	50	-	100	200	-	-	-	-
Հաղարջենու տնկիներ	-*	-	-	50	-	100	-	150	200	-	-	-	-
*խմբաքանակի յուրաքանչյուր 1000 տնկիի դեպքում նմուշին ավելացվում է 10 հատ «-» նշանը նշանակում է, որ տվյալ տեսակի տնկանյութի դեպքում նշված քանակի բույսեր նմուշում չեն ընտրվում:													

18. Ելակենու սածիլների, ազնվամորենու, մոշենու, տխիլենու նմուշների քանակը կազմում է խմբաքանակի 2 տոկոսը: Տնկիները վերցվում են խմբաքանակի տարբեր մասերից:

19. Պտղատու մշակաբույսերի պատվաստված պատվաստակալների նմուշի քանակը կազմում է 2,5 տոկոս մինչև 400 հատ խմբաքանակի դեպքում, 2 տոկոս՝ 400-5000 հատ խմբաքանակի դեպքում, և 1 տոկոս 5000 հատից ավել խմբաքանակի դեպքում: Ընդ որում մեկ փաթեթից վերցնում են ոչ պակաս 10 հատ պատվաստված պատվաստակալ:

20. Անմիջապես տնկարանային տարածքում իրացվող տնկիների համար նմուշների քանակը պայմանավորված է խմբաքանակով և իրականացվում է աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6.

Տնկարանային տարածքում իրացվող տնկիների նմուշների քանակը

Խմբաքանակում բույսերի թիվը, հատ	Նմուշում բույսերի թիվը, հատ
Մինչև 100	5
101-300 ներառյալ ավելի	10
301-500 ներառյալ և ավելի	15
501-1000 ներառյալ ավելի	25
1001-2000 ներառյալ ավելի	50
2000-ից ավել	Նմուշին ավելացնում են 5-ական հատ 50-ից ավել յուրաքանչյուր հաջորդող 1000 բույսի դեպքում

21. Նմուշառման արդյունքում ստացված հայտատուի կողմից վիճարկվող արդյունքների հիման կարող է հայտատուի ներկայությամբ իրականացվել նմուշառում երկրորդ անգամ, որը վերջնական է և տարածվում է ամբողջ խմբաքանակի վրա:

22. Նմուշառուն նմուշառումից հետո՝

1) լրացնում և ստորագրում է հավելված N 2-ով հաստատված ակտը,

2) լրացնում է սույն հավելվածով հաստատված պիտակը 2 օրինակից՝ համաձայն ձևի,

3) վերցված սերմերի կամ տնկանյութի նմուշը փաթեթավորում է՝ լրացված պիտակի մեկ օրինակը տեղադրելով փաթեթի մեջ, իսկ լրացված պիտակի երկրորդ օրինակը՝ փակցնում է նմուշի փաթեթի վրա և նմուշն ուղարկում է փորձաքննության:

Ձև

ՊԻՏԱԿ

ՍԵՐՄԵՐԻ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻՑ ՎԵՐՑՎԱԾ ՄԻՋԻՆ ՆՄՈՒՇԻ

Սերմերի կամ տնկանյութի խմբաքանակի նմուշառման ակտ № _____

_____ 20___ թ.

1. Սերմ կամ տնկանյութ ներկրողը կամ արտադրողը, արտադրողի հասցեն ----------

_____

2. Հայտատուի հաշվառման համարը _____
3. Մշակաբույսի տեսակը_____
4. Սորտը կամ հիբրիդը_____
5. Դասը կամ կարգը_____
6. Բերքահավաքի տարին_____
7. Խմբաքակնակը № _____
8. Խմբաքանակի քաշը/քանակը,(տոննա/հատ)_____
9. Փորձաքննության տեսակը_____
10. Նմուշառման վայրը_____

Պատասխանատու նմուշառու _____

(անուն ազգանունը, ստորագրությունը)

Հավելված N 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2023 թվականի օգոստոսի 28-ի
N 1601-Լ հրամանի

Ա Կ Տ
ՍԵՐՄԵՐԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻՑ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ

Հայտատու_____

Նմուշառու _____ _____
(անունը, ազգանունը, պաշտոնը) (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

Կատարվել են սերմերի նմուշառում և զննում՝ համաձայն ՀՀ կառավարություն 2023թ. -ի N -Ն որոշմամբ հաստատված կարգի, որը պահպանվում է _____
(պահպանությանվայրը)

Մշակաբույսը	Սորտը կամ հիբրիդը	Սորտային փաստա-թղթերի անվանումը, համարը և ամսաթիվը	Վերար-տադրու-թյունը	Բերքի տարին	Խմբա-քանակի համարը	Խմբա-քանակի կշիռը (տոննա)	Բեռնամանն երի քանակը	Սերմերի պահ-պանման վայրը	Սերմե րի ստացմ ան վայրը	Վերջին փորձա-քննության ամսաթիվը և համարը	Կատարվել է քիմիական մշակում (ախտա-հանում) և ինչ բուժա-նյութով	Ինչ փորձաքննության համար է վերցվել նմուշը	Ներկայացված նմուշների քանակը	
													պարկով	փաթեթով
1	2	3	5	6	7	8	9	10	11	12	13	14	16	18

Տեղեկություններ սերմերի մասին

Փորձանմուշներն ուղարկվել են _____սերմերի փորձաքննության լաբորատորիա

Նմուշառու _____ Հայտատու _____
(ստորագրությունը) (ստորագրությունը)

Փորձանմուշների պահպանության համար պատասխանատու անձ_____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ա Կ Տ
ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻՑ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ

Հայտատու_____

Նմուշառու _____ _____
(անունը, ազգանունը, պաշտոնը) (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

Կատարվել էտնկանյութի նմուշառում և զննում՝ համաձայն ՀՀ կառավարություն 2023թ. -ի N -Ն որոշմամբ հաստատված կարգի, որը պահպանվում է _____
(պահպանության վայրը)

Մշակաբույսը	Սորտը և կարգը	Սորտային փաստաթղթերի անվանումը, համարը և ամսաթիվը	Սորտային մաքրությունը (տոկոս)	Տնկանյութի տարիքը	Տնկանյութի արտադրման տարին	Խմբաքանակի համարը	Խմբաքանակի կշիռը (տոննա)	Փաթեթների (խրձերի) քանակը	Տնկանյութի քանակը	Տնկանյութի պահպանման վայրը	Տնկանյութի ստացման վայրը	Վերջին փորձաքննության ամսաթիվը և համարը	Ինչ փորձաքննության համար է վերցվել նմուշը	Ներկայացված նմուշների քանակը	
														խրձով	փաթեթով
1	2	3	4	5	6	7	8	9		10	11	12	14	16	18

Տեղեկություններ սերմերի մասին

Փորձանմուշներն ուղարկվել են _____տնկանյութի գնահատման կամ փորձաքննության լաբորատորիա

Նմուշառու _____ Հայտատու _____
(ստորագրությունը) (ստորագրությունը)

Փորձանմուշների պահպանության համար պատասխանատու անձ_____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)